ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱԲԱՋԱՆՅԱՆ ԱՍՏՂԻԿ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ XIV – XVII ԴԴ. ԽԵՑԵՂԵՆԸ

Է.00.03. – «Հնագիտություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2015

ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

БАБАДЖАНЯН АСТХИК АЛЕКСАНДРОВНА

КЕРАМИКА АРМЕНИИ В XIV – XVII ВВ.

АВТОРЕФЕРАТ
диссертации на соискание учёной
степени кандидата исторических наук
по специальности 07.00.03 “Археология”

ЕРЕВАН – 2015

Ատենախոսության թեման հաստատավել է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝	պ.գ.թ.	Ն. Գ. Հակոբյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	պ.գ.դ., պրոֆ.	Ի. Գ. Ղարիբյան
	պ.գ.թ.	Ա. Ս. Ժամկոչյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՊԹ Հնագիտության բաժին

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 1-ին, ժամը 16^{30}-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի 007 հնագիտության և ազգագրության մասնագիտական խորհրդում (հասցեն՝ Երևան–0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գրադարանում:
Սեղմագիրն առաքված է 2015թ. հոկտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
Պատմական գիտությունների թեկնածու Հ.Ա. Մելքոնյան

Тема диссертации утверждена на заседании учёного совета Института археологии и этнографии НАН РА

Научный руководитель:	к.и.н.	Акопян Н. Г.
Официальные оппоненты:	д.и.н., проф.	Гарибян И. Г.
	к.и.н.	Жамкочян А. С.

Ведущая организация: Отдел археологии МИА

Защита состоится 1 декабря 2015 г. в 16^{30} часов, на заседании специализированного совета 007 по археологии и этнографии при Институте археологии и этнографии НАН РА (адрес: Ереван–0025, ул. Чаренца 15).

Автореферат разослан 30 октября 2015 г.

Учёный секретарь специализированного совета,
кандидат исторических наук У.А. Мелконян

- *XVII centuries onward.* The interrupted traditions begin to be restored and a gradual rise is observed (especially in architecture and in the construction ceramics related with this).

The comprehensive study of the pottery allowed us to observe similarities and inter-regional and local differences in the discussed period. The ceramics, especially the glazed pottery, are not only a rich source for the study the specific characteristics of the ceramic craft but are also important in the study of the cultural and trade relations between the countries of the East. Imported samples from Iranian, Central Asian, Chinese, and Osmanian ceramic centers as well as local imitations testify through by their influences to the economic, trade and cultural relations between these countries.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրության արդիականությունը: Հայաստանի XIV-XVII դդ. խեցեղենը միջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրության պատմության մեջ համեմատաբար սակավ ուշադրության արժանացած բնագավառներից է: Նյութական մշակույթի ուսումնասիրության համար իբրև սկզբնաղբյուր են ծառայում հնագիտական գտածոները, որոնց քննական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ու լրացնելու հասարակական, տնտեսական, արհեստագործական կյանքի և նյութական մշակույթի կարևորագույն բնագավառներից մեկը՝ խեցեգործական արհեստը իր բոլոր դրսևորումներով: XIV-XVII դդ. խեցեղենն իբրև առանձին քննության առարկա, արդիական դարձավ միայն վերջին ժամանակներս, երբ այդ շրջանի հուշարձաններն սկսեցին պեղել ոչ թե բազմաշերտ հուշարձանի մշակութային վերին շերտ, այլ որպես առանձին հնագիտական միավոր: Միջնադարյան հնագիտական հուշարձաններից հայտնաբերված խեցեղեն հավաքածուներն առանց գիտական մանրակրկիտ վերլուծության ու պատշաճ գնահատման կուտակվել են Հայաստանի տարբեր թանգարաններում և ՀՀ ԳԱԱ ՀԱԻ հատուկ զետեղարաններում: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ առաջին անգամ փորձ է կատարվում շրջանառության մեջ դնել Հայաստանի XIV-XVII դդ. խեցեղենը՝ պատշաճ տեղ հատկացնելով Հայաստանի միջնադարյան խեցեգործական արտադրանքի զարգացման մեջ:

Հետազոտության հիմնական նպատակն ու խնդիրները: Ուսումնասիրության նպատակն է Հայաստանի տարբեր շրջանների միջնադարյան հուշարձաններից հայտնաբերված XIV-XVII դդ. խեցեղենը համախմբել, դասակարգել, քննական վերլուծության ենթարկել՝ ամբողջացնելով խեցեգործության ընդհանուր պատկերն ու զարգացման ընթացքը: Այդ նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

ա) հավաքված նյութը բաժանել ըստ կիրառության ու տեսակների,

բ) կազմել համեմատական աղյուսակներ՝ առաջնորդվելով անոթի կիրառական նշանակությամբ և հիմնվելով խեցատի ֆիզիկական ու քիմիական հատկանիշների վրա,

գ) կազմել քարտեզ՝ ընդգրկելով այն հուշարձանները, որոնց խեցեղեն նյութը աշխատանքի հիմքն է: Թեև հուշարձանները ցրված են ՀՀ ողջ տարածքով, սակայն հայտնաբերված հավաքածուների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ամբողջացնել Հայաստանի XIV-XVII դդ. խեցեղենի ընդհանուր պատկերը:

դ) դիտարկել Հայաստանի տարբեր տարածաշրջանների խեցեղենի ընդհանրություններն ու առանձնահատկությունները, տարբեր արհեստագործական կենտրոնների ազդեցությունները,

ե) վերլուծել ըստ Մերձավոր Արևելքի, Իրանի, Միջին Ասիայի, Չինաստանի, Բյուզանդիայի և հարևան Վրաստանի ու Ադրբեջանի խեցեգործական կենտրոնների նյութի համեմատական սկզբունքի,

զ) ենթարկել ժամանակագրական հնարավորինս նեղ փուլաբաժանման:

Հետազոտության գիտական նորույթը: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում մոտ երեք տասնյակ (ավելի վաղ և վերջին տասնամյակում պեղված) հուշարձաններից հավաքված խեցեղեն հավաքածուները, որոնց ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում արժևորելու տվյալ հնագիտական հուշարձանը՝ կարևորելով նրա դերը Հայաստանի ուշմիջնադարյան առևտրա-տնտեսական, հասարակական ու մշակութային կյանքում:

Հետազոտության գործնական նշանակությունը: Աշխատությունն առաջին ուսումնասիրությունն է XIV-XVII դդ. խեցեղենի շուրջ և կարող է հիմք ծառայել հետագայում առավել համալիր ուսումնասիրության.

ա) ընդարձակել ժամանակագրական սահմանները,

բ) ընդգրկել ավելի շատ թվով հուշարձանների խեցեղեն գտածոները,

գ) կիրառել լուսապատկերային, քիմիական անալիզների տվյալները, որոնք կամբողջացնեն միջնադարյան խեցեղենի ընդհանուր բնութագիրը:

Աշխատանքը կարող է կիրառվել նաև

1. հնագիտական համեմատական աղյուսակներ կազմելիս,

2. Հայաստանի պատմահնագիտական ժառանգությանը վերաբերող աշխատություններում,

3. Հայաստանի միջնադարյան մշակույթի պատմության դասընթացում:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Աշխատանքն ամբողջությամբ քննարկվել, հավանության է արժանացել և հանձնարարվել հրապարակային պաշտպանության ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի միջին դարերի հնագիտության բաժնում: Ատենախոսության թեմայով զեկուցումներ են կարդացվել հանրապետական և միջազգային գիտաժողովներում, հիմնական դրույթները հրատարակվել են գիտական տարբեր պարբերականներում:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթաբաժիններով, եզրակացություններից, գրականության ցանկից, գծանկարների ու լուսանկարների աղյուսակներից:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ուսումնասիրված լինելու մակարդակը, ներկայացված են աշխատանքի գիտական նորույթը և առկա խնդիրները, գրականության համառոտ տեսությունը:

ԳԼՈՒԽ I. XIV-XVII ԴԴ. ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ (ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)

XIV-XVII դարերը հայ ժողովրդի պատմության կնճռոտ և քիչ լուսաբանված ժամանակահատվածն են, երբ երկրում տիրում էր քաղաքական և տնտեսական անկայուն իրավիճակ: Զաքարյանների տիրապետության շրջա-

of the XIV – XVII centuries setting this assemblage in its proper place in the development of the ceramic production of medieval Armenia.

In the study of the pottery almost 30 different archaeological sites (including cities such as Dvin, Ani, Yerevan, Lori; burghs such as Garni, Yeghegis, Vagharshapat; rural settlements such as Vostink, Ambroy, Haykadzor, Spitak, Teghut; fortresses such as Anberd, Dashtadem, Tiknuni; monasteries such as Shativanq, Noravanq, Gndevanq, Teghenyats, Ushi, Kobayr; and caravanserais such as Selim, Arayi, Artashat) in the area of RA and Ani (currently in Turkey) which have been investigated the primarily task is the issue of the principles of the classification. Having considered different methods in the system of the elaboration of the principles of classification of medieval pottery, we follow the mixed classification method. The ceramic material due to its technological character is separated into two groups: glazed and unglazed. The following phases of the classification are going in these large groups. The classification of the unglazed pottery is significantly different from the glazed pottery. First of all the unglazed pottery is grouped by its function (habitual, with its subgroups, and construction ceramics), then by morphology and, finally, by decoration. Although the decoration is the last phase of our classification scheme, it is the most important indicator for characterizing and dating the pottery. Medieval unglazed pottery was decorated through various methods: engobing, red-polishing, painting, engraving, carving, stamping, mold pressing (imprinting in ornamental molds), and applique ornaments. The unglazed ceramic primarily is of local production, and imported examples have not been found. It is the inherited continuation of the previous period, though it changes in quality and variety of the methods of ornamentation.

The most practical method of systematization for glazed pottery is through technological classification in chronological periods. The main technological feature in the grouping of the glazed pottery is the combination of the pottery fabric (ordinary red and white) and the type of the glaze (transparent, opaque). These form the types of the glazed ceramic. The medieval glazed pottery of Armenia is divided in 3 types: ordinary glazed ceramic, faience and porcelain. Then the glazed pottery is further divided by the color of the glaze and finally, by methods of decoration. The qualitative features of the glazes dictate different ways of decoration. Decorative techniques used with opaque glaze include overglaze painting, engraving and champlevé decoration; decoration used with transparent alkali glaze includes underglaze painting and engraving.

The study of the XIV – XVII centuries ceramic allows us to partly complete the overall description of the development of ceramic production. In the course of discussion, the general period will be divided into three phases:

- *The last quarter of the XIII - middle of the XIV centuries.* Some types of ceramic production continue the traditions of the previous period gradually introducing new technical and technological skills and resources. This phenomenon is also observed in other aspects of material culture (architecture, cross-stones, miniatures, metalwork, etc.).
- *XV-XVI centuries*. A period of interruption in the development of ceramic production.

непрозрачной глазури применяли надглазурную роспись, гравировку и рельефный орнамент способом удаления ангоба, а при прозрачной глазури в основном использовалась подглазурная роспись, а также гравировка.

Таким образом, в керамике XIV-XVII вв. можно выделить три этапа:

- Некоторые виды керамического производство XIII –середины XIV вв. продолжают традиции предыдущего периода с постепенным внедрением новых технических и технологических приемов. Это явление было характерно и для других отраслей материальной культуры (архитектура, хачкары, миниатюра, художественный металл и др.).
- XV – XVI вв. – это период упадка в развитии керамического производства.
- В XVII в. в керамическом производстве наблюдается постепенное возрождение прерванных традиций (в связи с развитием архитектуры и строительной керамики).

Комплексное исследование керамики дает возможность также выделить региональные особенности и локальные различия. Керамика, и в особенности глазурованная, является богатым источником для изучения особенностей гончарного ремесла, а также торговых и культурный отношений между странами Востока. Находки образцов керамики иранских, среднеазиатских, китайских, турецких керамических центров из раскопок средневековых памятников Армении, а также их местных подражаний, свидетельствуют о торговых, экономических и культурных связей между этими странами.

ASTGHIK A. BABAJANYAN
THE CERAMICS OF ARMENIA OF THE XIV – XVII CENTURIES
SUMMARY

The study of the pottery of the XIV – XVII centuries of Armenia is the area of material culture that has received the least attention of the medieval period as a whole. In the XIV – XVII c. the economy and cultural life had greatly decayed as a result of disruptive invasions and incessant raids by Mongol', Mongol-Turkmen' (Timur'), Turkmen' (Qarã-koyūnlū and Ãk- koyūnlū confederations), Turkish and Iranian groups. In the Soviet and Post-Soviet historiography the XV – XVI centuries in particular is characterized as a decadent period. Due to these issues, the ceramic is valuable not only in itself but as the most massive and varied type of material culture that has survived up to the present day.

Ceramics are the most massive and multifarious material found during archaeological excavations of medieval sites. Although archaeological ceramics are mostly fragmentary, they provide an opportunity not only to assess the development and the volume of local ceramic production, but they are also the most important and often the only characteristic feature used to date the monument (in the absence of coins and inscriptions). As a subject of investigation the ceramics of the XIV – XVII centuries became topical only recently, when archaeological sites of this period began to be excavated not as the topmost cultural layer of a multi-phase monument but as an archaeologically separate entity. The present dissertation is the first attempt to research and publish the pottery of the medieval Armenia

նում սկսված պատմական օրինաչափ առաջընթացն ընդհատվեց մոնղոլական քոչվոր ցեղերի արշավանքներից հետո, որոնք իրենց նվաճումների աշխարհագրությունը տարածեցին Չինաստանից մինչև Սև ու Միջերկրական ծովերի ափերը: Հայաստանը 1256-1344 թթ. ընդգրկվեց մոնղոլական հսկայածավալ պետության կուսակալություններից մեկի՝ Հուլավյան մոնղոլա-իրանական պետության կազմում և ինչպես մոնղոլական կայսրությանը բռնի ուժով միացած Մերձավոր ու Հեռավոր Արևելքի մյուս երկրները, ենթարկվեց մոնղոլական քաղաքական ու մշակութային ազդեցությանը: Թեև քաղաքական ու տնտեսական տեսանկյունից դա բացասական հետևանքներ ունեցավ առաջադեմ երկրների համար, սակայն որոշ չափով նպաստեց նաև դրանց միջև առևտրական ու մշակութային հարաբերությունների աշխուժացմանը, որը սկսել էր մեծ մասշտաբներով ծավալվել դեռևս Զաքարյանների իշխանության շրջանում:

Հուլավյան իլխանության թուլացումից ու կազմալուծումից հետո մեկը մյուսի հետևից Հայաստանն ու հարևան երկրներն ասպատակեցին Ոսկե հորդայի խան Թողթամիշը (1384-1385), ապա Մավերաննահրի տիրակալ Լենկ Թեմուրը (1385-1386): XIV-XV դդ. կարա-կոյունլու և ակ-կոյունլու համադաշնությունները փոփոխական հաջողություններով իշխեցին Հայաստանում մինչև XVI դ. սկիզբ, երբ այն այս անգամ ռազմական թատերաբեմ դարձավ հակառակորդ երկու կողմերի՝ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Իրանի միջև:

Քաղաքական բուռն անցուդարձերի, սեփական տարածքում անընդմեջ տեղի ունեցող ռազմական գործողությունների հետևանքով հայ ժողովուրդն այլևս անկարող էր հավասարապես պայքարել ասպարեզ եկած նոր ու հզոր ուժերի դեմ: Միացյալ պետության բացակայության պայմաններում տեղի ունեցավ վարչատարածքային մասնատում, որն անդրադարձավ նյութական մշակույթի զարգացման հետագա ընթացքի վրա:

XIV-XVII դդ. արտաքին քաղաքական շարժերի հետևանքով փոխվեց Հայաստանի ներքին սոցիալ-տնտեսական դրությունը: Մոնղոլական արշավանքներից հետո երկրի արտադրողական ուժերի աստիճանական արտահոսքի հետևանքով հետզհետե անկում ապրեցին քաղաքները, արհեստներն ու առևտուրը: Արտաքին ներխուժումներից մեծապես տուժած քաղաքներն այլևս չվերականգնվեցին, լավագույն դեպքում վերածվեցին գյուղական բնակավայրերի: Քաղաքների աստիճանական անկման հետևանքով մշակութային կյանքն աշխուժացավ վանական համալիրներում, որոնք հետզհետե դարձան մշակութային կյանքի կատալիզատորներ: Քաղաքների անկմամբ պայմանավորված տեղաշարժվեցին նաև քարավանային ճանապարհները: Զրկվելով տարանցիկ առևտրից ստացվող եկամտից, Հայաստանի խոշոր քաղաքներ Դվինն ու Անին կորցրեցին իրենց առևտրա-արհեստագործական կենտրոնների կարգավիճակը: Առևտրական գլխավոր ճանապարհի ճյուղավորումների հանգուցակետերում

քարավանային կանգառների համար հանգրվան դարձան գյուղական բնակավայրերը, տեղական նշանակության քաղաքային ավանները, քարավանատները:

Այնուամենայնիվ, մեր թեմայի առանցքը՝ խեցեգործական արտադրանքը, երկրի տնտեսական կյանքի հետադիմության, արհեստագործության ու առևտրի ընդհանուր անկման պայմաններում և ժամանակաշրջանի պահանջներին համապատասխան շարունակում էր դանդաղ զարգացում ապրել: Միաժամանակ քննվող ժամանակաշրջանի Հայաստանի տարբեր տարածաշրջանների պատմությունն ու հնագիտական աղբյուրներն ուսումնասիրելիս ակնհայտ է դառնում Հայաստանի քաղաքական, վարչական մասնատվածության ազդեցությունը նյութական մշակույթի վրա, որն իր արտահայտությունն է գտնում և խեցեղեն արտադրանքում:

Հայաստանի XIV-XVII դդ. խեցեղենի ուսումնասիրությունը կատարվել է ներկայիս ՀՀ ողջ տարածքով տեղաբաշխված մոտ երեք տասնյակ տարաբնույթ հուշարձանների պեղումներով և պատահականորեն հայտնաբերված հավաքածուների հիման վրա: Որոշ հուշարձաններ պեղվել կամ պեղվում են սիստեմատիկորեն, մի մասում իրականացվել են մասնակի պեղումներ կամ մաքրման աշխատանքներ: Հնագիտական հուշարձանները ներկայացվում են պատմահնագիտական միջավայրի համառոտ նկարագրությամբ՝ խեցեգործական արտադրության զարգացման մեջ իրենց ունեցած ներդրումը որպես հիմք ընդունելով: Հնագիտական գտածոներում մեծամասնություն կազմող խեցեղենը, թեև հիմնականում բեկորային վիճակում է հայտնաբերվել, սակայն թույլ է տալիս ոչ միայն հետևել արտադրության այդ տեսակի զարգացմանը, այլև տեղական արտադրության ծավալին: Այդ առումով առանձնակի կարևոր են քաղաքների (Դվին, Անի, Երևան, Լոռե), գյուղաքաղաքների (Գառնի, Եղեգիս, Վաղարշապատ) և գյուղական բնակավայրերի (Ոստինք, Ամբրոյի, Հայկաձոր, Սպիտակ, Թեղուտ) պեղումները: Խեցեգործական արհեստը զարգանում էր նաև ամրոցներում (Անբերդ, Դաշտադեմ, Տիկնունի, Այգեձորի Աղջկաբերդ, Տավուշ) ու վանքերում (Շատիվանք, Նորավանք, Գնդեվանք, Թեղենյաց վանք, Ուշի, Քոբայր)՝ կոչված բավարարելու տեղի բնակչության կարիքները, թեև մրցունակ չէր ներքին և արտաքին շուկայում: Սելիմի, Արայի գյուղի, Արտաշատի քարավանատների պեղումներով հայտնաբերված խեցեղենում առանձնանում են տեղական և ներմուծած օրինակները՝ վավերացնելով դրանց ակտիվ մասնակցությունը ներքին և արտաքին առևտրում:

Նյութի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս ամբողջացնելու, ճշգրտելու մեր պատկերացումները ՀՀ տարբեր տարածաշրջանների արտադրության տվյալ ոլորտի զարգացման մակարդակն ու առանձնահատկությունները՝ մատնանշելով Հայաստանի տարբեր տարածաշրջանների խեցեգործական արտադրանքի ընդհանրություններն ու տարբերությունները:

Керамика, выявленная в результате раскопок позднесредневековых памятников и дошедшая до нас главным образом в фрагментарном состоянии, позволяет, тем не менее, проследить не только ход в развитии керамического производства, но и за его объемами. Кроме того, она позволяет выявить торгово-экономические отношения между странами Востока и пролить свет на некоторые стороны социально-экономической и культурной жизни Армении. Керамика является наиболее важным материалом для характеристики и датировки памятника в случае отсутсвия монет и эпиграфических надписей.

Керамика XIV – XVII вв. стала предметом отдельного исследования сравнительно недавно, когда к позднесредневековым памятникам был выроботан особый подход как самостоятельным археологичским единицам, а не в составе многослойных памятников в виде лишь их верхних горизонтов.

В данной работе впервые сделана попытка ввести в научный оборот керамику Армении XIV – XVII вв. и показать ее достойное место в развитии керамического производсва средневековой Армении.

Перед нами была поставлена первоочередная задача разработки принципов классификации керамики, обнаруженной в результате раскопок более чем 30 различных археологических памятников на территории РА (городов Двин, Ереван, Лоре, городов сельского типа Гарни, Ехегис, Вагаршапат, сельских поселений Востинк, Амброи, Айкадзор, Спитак, Техут, крепостей Анберд, Даштадем, Тикнуни, монастырей Шативанк, Нораванк, Гндеванк, Техеняц ванк, Уши, Кобайр, караван-сараев Селим, Ара, Арташат), а также Ани (на территории современной Турции).

Учитовая многообразие методов классификации, мы предпочли наиболее целесообразным руководствоваться смешанным методом.

Керамика по техническим принципам делится на две группы: глазурованная и неглазурованная. Дана также классификация и внутри каждой группы. Классификация неглазурованной керамики существенно отличается от глазурованной. Неглазурованная керамика группируется по функциональному признаку (хозяйственно-бытавая, со своими подтипами, а также строительная), за которым следует ее морфология и наконец, декорировка. Для украшения неглазурованной керамики использовали технику ангобирования, краснолощение, роспись, гравировку, штамповку, формовку, вдавленный, рельефный и налепной орнамент.

Неглазурованная керамика относится исключительно к местному производству. Импортные изделия не встречаются. Неглазурованная керамика продолжает традиции предыдущего времени, несмотря на то, что уступает ей в качественном отношении и по декорировке.

Наиболее практичным методом классификации глазурованной керамики является систематизация по технологическим признакам в хронологическом порядке. Главным технологическим признаком при группировке глазурованной керамики является взаимосопоставимость типов черепка (обычная красноглиненная и белоглиненная, кашин, каолин) и видов глазурей (прозрачные, непрозрачные).

В средневековой глазурованной керамики выделяются три вида: обычная глазурованная, фаянс и фарфор. Следующая классификация глазурованной керамики дается по цвету глазури и наконец, способами украшения. Качественные особенности глазурей диктовали различные способы декорировки. При

օրինակները: Անջնարակ՝ չհարդարված և զարդարուն խեցեղենը գերազանցապես տեղական արտադրություն է, որում, ինչպես վերը նշեցինք, նկատվում են լոկալ տարբերություններ, մասնավորապես հարդարանքի առումով: Ջնարակած խեցեղենում առանձնանում են ա. - զուտ տեղական, բ. - ներմուծած խեցեղենի տեխնիկական, տեխնոլոգիական հատկանիշները և զարդաձևերն ընդօրինակող նմուշներ և գ. - ներմուծած օրինակներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԵՂԻՆԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Նորահայտ հոգևոր կառույց Թեղուտում, *„Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը”* միջ. գիտ. նյութերի ժողովածու, Երևան, 2012, էջ 109-111:

2. Թեղենյաց վանքի խեցեղենը, ՊԲՀ, 2013, 1(192), էջ 134-150 (համահեղինակ՝ Դ. Միրիջանյան):

3. Քոբայր վանական համալիրի զանգակատան պեղման աշխատանքների արդյունքները, ՊԲՀ, 2014, 1(195), էջ 155-163 (համահեղինակ՝ Դ. Միրիջանյան):

4. Հայաստանի ԺԴ.-ԺԷ. դդ. ջնարակած խեցեղենը, Էջմիածին, 2014, Է (հուլիս), էջ 106-123:

5. Սելիմի քարավանատան պեղումների նախնական արդյունքները, ՎԷՄ համահայկական հանդես, 2014, 4(48), էջ 125-134 (համահեղինակ՝ Ա. Զաքյան):

6. The Kotayk survey project (KSP): Preliminary report of 2014 fieldworks, Aramazd, Armenian journal of Near Eastern Studies, vol. IX, issue 1, 2015, p. 58-68 (with A. Petrosyan, R. Dan, R. La Farina, M. Raccidi, M. Casteluccia, B. Gasparyan).

7. Մեծամորը միջնադարում (ըստ խեցեղեն գտածոների), Մեծամոր. կեսդարյա պեղումների տարեգրություն, Մեծամոր հնավայրի պեղումների 50 և արգելոց-թանգարանի ստեղծման 45-ամյակներին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Երևան, 2015, էջ 218-233:

8. Հայաստանի Թ.-ԺԷ. դդ. անջնարակ խեցեղենի հարդարման եղանակները, Էջմիածին, 2015, Թ (սեպտեմբեր), էջ 111-125:

БАБАДЖАНЯН АСТХИК АЛЕКСАНДРОВНА
КЕРАМИКА АРМЕНИИ В XIV – XVII ВВ.
РЕЗЮМЕ

Керамика Армении XIV – XVII вв. является одной из наименее исследованных областей материальной культуры средневековой Армении. Беспрерывные нашествия монгольских, монголо-туркменских (тимуридских), туркменских (кара-коюнлу, ак-коюнлу) племен, а также Османской Турции и Сефевидского Ирана в течение XIV – XVII вв. нанесли тяжелый урон экономике и культурной жизни Армении. В советской и постсоветской историографии указанный период характеризуется временем упадка. В этой связи керамика как самый массовый материал является неоценимым источником для изучения истории материальной культуры.

ԳԼՈՒԽ II. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԽԵՑԵՂԵՆԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

XIX-XX դդ. սահմանագլխին որպես օրակարգի առաջնային խնդիր առաջադրվում է հնագիտական աշխատանքների արդյունքում կուտակված նյութական մշակութային արժեքների դասակարգման սկզբունքների մշակում ժամանակակից մեթոդներով: Վերջինս առավել արդիական է խեցեղենի պարագայում, որը պեղումներով հայտնաբերված ոչ միայն ամենազանգվածային նյութն է, այլև տվյալ մշակութային հուշարձանի ճշգրիտ թվագրման բնորոշիչ տարրերից մեկը: Այդ պատճառով խեցեղենի ուսումնասիրությամբ զբաղվող բազմաթիվ մասնագետներ թե՛ Հայաստանում, թե՛ ողջ աշխարհում փորձել են գտնել դրա դասակարգման սկզբունքները՝ ելնելով տարբեր՝ ժամանակագրական, տեխնոլոգիական, ոճական, հարդարման մոտեցումներից:

Միջնադարյան խեցեղենի դասակարգման սկզբունքների մշակման համակարգում կատարված տարաբնույթ մոտեցումներն հաշվի առնելով, նպատակահարմար ենք գտել առաջնորդվել խառը դասակարգման մեթոդով: Առաջին փուլում խեցեղենը բաժանել ենք, ըստ տեխնոլոգիական հատկանիշների, ջնարակած և անջնարակ, քանզի ջնարակը խեցեղենի մակերևույթի ոչ միայն լրացուցիչ մշակման տարրն է (եթե համեմատենք, օրինակ՝ անգոբապատ կամ կարմրաներկ ու կարմրափայլ մշակման հետ), այլև տեխնոլոգիական այն հատկանիշը, որով ջնարակած խեցեղենն առանձնանում է անջնարակից: Դասակարգման հաջորդ փուլերն ընթանում են այս երկու մեծ խմբերի ներսում:

Անջնարակ խեցեղենի պարագայում առաջնահերթությունը տրվում է կիրառական նշանակությանը, ըստ որի խեցեղենը բաժանվում է 3 խմբի՝ իրենց ենթախմբերով:

1. տնտեսական-կենցաղային նշանակության անոթներ.

ա. մեծ ու փոքր տարաներ՝ նախատեսված չոր և հեղուկ մթերքի պահպանության համար,

բ. խոհանոցային (կճուճներ, տաշտ-կոնքեր), խոհանոցային արտադրական (խնոցիներ, կաթնամաններ, քամիչներ, սաջ-տապականեր) և սեղանի սպասք (թասեր, գավաթներ, քրեղաններ, պնակներ, մատուցարաններ, ջրամաններ, աղաթասեր),

գ. լուսավորության միջոցներ (ճրագներ, ջահեր),

2. կենցաղային նշանակության այլ առարկաներ.

ա. ծխամորճեր,

բ. զարդարանքի կամ պերճանքի առարկաներ,

գ. կենցաղային արտադրական գործիքներ (արհեստագործական գործիքներ, եռոտանիներ, կաղապարներ),

3. շինարարական խեցեղեն.

ա. փողրակներ,

բ.ճարտարապետական հարդարանքի դեկորատիվ մանրամասներ:

Անջնարակ խեցեղենի դասակարգման հաջորդ փուլում ուշադրություն է դարձվում ձևաբանական կերտվածքին և վերջապես, հարդարմանը:

Ջնարակած խեցեղենը դասակարգվում է ժամանակագրական փուլաբաժանումներում ըստ տեխնոլոգիական զարգացումների, որն առավել համակարգված տարբերակ է: Պետք է նշել նաև, որ այլ երկրների ջնարակած խեցեղենի բավականին խոր ուսումնասիրված լինելը համեմատական լայն դաշտ է ստեղծում Հայաստանի ջնարակած խեցեղենի առավել ճիշտ բնութագրման և նեղ փուլաբաժանման համար: Այլ է անջնարակ խեցեղենի պարագայում, որը հիմնականում տեղական արտադրության է: Դարերի ընթացքում փոփոխությունների քիչ ենթարկված լինելու պատճառով բարդություններ են առաջանում նրա նեղ փուլաբաժանումը կատարելու համար: Առաջադրանքը խիստ դժվարացնում է նաև որոշ հուշարձանների շերտագրական-մշակութային միջավայրի բացակայությունը: Չնայած այդ ամենին՝ որոշակի հատկանիշներով հնարավոր է նյութը դասակարգել ժամանակագրորեն (եթե, իհարկե, պահպանված բեկորի վրա առկա է այդ հատկանիշը):

Ջնարակած խեցեղենի դասակարգման հաջորդ քայլը բաժանումն է ըստ խեցու հիմքերի՝ իրենց ենթաբաժանումներով՝ (սովորական՝ կարմիր և դեղնաշիկավուն խեցի, քաշին և կաոլին): Ջնարակած խեցեղենի դասակարգման մյուս բնորոշիչ կողմը ջնարակի բաղադրությամբ (ալկալիական և կապարային) պայմանավորված նրա որակական հատկանիշներն են (թափանցիկ և անթափանց), որոնք թելադրում են հարդարման տարբեր միջոցների կիրարկում (անթափանց ջնարակի պարագայում՝ վերջնարակային նկարազարդում, փորագրում ու անգոբի հեռացում, թափանցիկ ջնարակի պարագայում՝ ենթաջնարակային նկարազարդում, նաև փորագրում): Ջնարակած խեցեղենի բաժանման հաջորդ փուլը տարաբաժանումն է, ըստ ջնարակի գույնի: Գունային լուծումները պայմանավորված են որոշ մետաղական օքսիդների և դրանց խառնուրդների օգտագործմամբ:

Սույն աշխատանքում դասակարգման ընդհանուր սկզբունքներին զուգահեռ կփորձենք առանձնացնել տեղական և ներմուծված խեցեղենը: Իրանական, միջինասիական, չինական, թուրքական խեցեգործական կենտրոնների արտադրանքի նմուշների գյուտերը Հայաստանի միջնադարյան հուշարձաններից վկայում են այդ երկրների հետ առևտրա-տնտեսական ու մշակութային կապերի մասին:

ԳԼՈՒԽ III. ԱՆՋՆԱՐԱԿ՝ ԱՆԶԱՐԴ ԵՎ ԶԱՐԴԱՐՈՒՆ ԽԵՑԵՂԵՆ

Միջնադարյան հուշարձանների պեղումներով հայտնաբերված գտածոներում ամենաստվար խումբը անջնարակ խեցեղենն է, որը թեև մեզ հասել է մեծ մասամբ բեկորային վիճակում, սակայն հնարավորություն է ընձեռում ոչ միայն հետևել խեցեգործության զարգացմանը, տեղական արտադրության ծավալին, այլև նրա համակողմանի ուսումնասիրությունը թույլ է տալիս լուսաբանել միջ-

ների միջև ընդհանրություններն ու լոկալ տարբերությունները: Հայաստանի տարբեր տարածաշրջաններում գոյություն ունեին որոշակիորեն առանձնացող մշակութային դպրոցներ, որոնք զգալի չափով տարբերվում էին մեկը մյուսից: Դա անդրադառնում է նաև խեցեգործական արհեստի զարգացման վրա: Հայտնի է, որ Սյունիքում Օրբելյանների հովանավորությամբ, ինչպես նաև քարավանային գլխավոր ճանապարհի ուղղություններից մեկի՝ այդ տարածաշրջանով անցնելու հանգամանքը նպաստում էր տնտեսական ու մշակութային կյանքի առաջադիմությանը, մինչդեռ կենտրոնական շրջաններում, հատկապես Դվին ու Անի քաղաքները զնում են դեպի անկում:

5. Դասվելով կիրառական արվեստների շարքում, խեցեգործական արտադրանքը բացի ֆունկցիոնալ գործառույթից ունի նաև գեղարվեստական արժեք: Առավել հատկանշական է ջնարակած խեցեղենը, որը բացառիկ հնարավորություններ է ընձեռում դարաշրջանի խեցեղենի ուսումնասիրության գործում: Այն վեր է հանում ոչ միայն տեխնոլոգիական գործընթացի առաջընթացը, այլև գեղարվեստական ձևավորման, հարդարման սկզբունքները:

Թեև որոշակիորեն կորցնելով իր գեղարվեստական արժեքը նախորդ ժամանակաշրջանի՝ XII – XIII դդ. բարձրարժեք տեսականու համեմատ, XIV – XVII դդ. խեցեղենն, այնուամենայնիվ, որպես սկզբնաղբյուր մեծ հետաքրքրություն է ներկայացնում՝ նոր տվյալներով լրացնելով Հայաստանի այդ ժամանակաշրջանի հասարակական-տնտեսական, մշակութային կյանքի ընդհանուր բնութագիրը:

6. Խեցեղենը կարևոր սկզբնաղբյուր է նաև տարբեր երկրների միջև գոյություն ունեցող մշակութային ու առևտրական հարաբերությունների ուսումնասիրության գործում: Այն մատնանշում է տեխնիկական ու գեղարվեստական միևնույն հատկանիշներ ունեցող այս կամ այն տիպի խեցեղենի տարածվածության սահմանները, շեշտում պատկանելությունը հասարակության տարբեր խավերին: Այդ ամենն ավելի վառ արտահայտված է ջնարակապատ խեցեղենում:

7. XIV դարի վերջերից կտրուկ փոխվում է ջնարակած խեցեղենի գեղարվեստական հարդարանքը, որը մեծապես կապված էր քաղաքական գործոնի հետ: XIII դարում մոնղոլական կայսրությունը, բռնի ուժով միացնելով Մերձավոր ու Հեռավոր Արևելքի երկրները, բնականաբար նպաստում էր այդ երկրների միջև առևտրական ու մշակութային հարաբերությունների աշխուժացմանը: Տարբեր քաղաքակրթությունների միավորումը միասնական պետության կազմում մեծապես ազդեց նաև ճաշակի վրա, որը ցայտուն արտացոլվեց և ջնարակապատ խեցեղենում: Փոփոխություններն ակնառու էին ոչ միայն տեխնիկա-տեխնոլոգիական ոլորտներում, այլև զարդանկարման մեջ: Գերակա դարձան չինական մոտիվները, որոնք ժամանակի ընթացքում ամբողջովին ներգրավվեցին Արևելքի բոլոր երկրների խեցեղենի հարդարանքում:

8. Խեցեղենի դասակարգումը, մանրամասն նկարագրությունն ու համեմատական վերլուծությունը թույլ են տալիս առանձնացնել տեղական և ներմուծած

կան անընդմեջ ավերիչ արշավանքների ու գերեվարությունների արդյունքում մեծապես տուժեցին Հայաստանի տնտեսությունն ու մշակութային կյանքը:

Նյութական մշակույթի զարգացման ընդհանուր վիճակն ու ընթացքը գնահատելիս, նկատելի է, որ անկման երևույթները, սակայն, հավասարաչափ չեն տարածվում մշակույթի բոլոր բնագավառների վրա: Անկում նկատվում է հատկապես նյութական մշակույթի այն ոլորտներում, որոնք նյութական մեծ միջոցներ էին պահանջում (ճարտարապետություն, քանդակագործություն), այնինչ որոշ բնագավառներում (գեղարվեստական մետաղի մշակություն, փայտի գեղարվեստական մշակում, մանրանկարչություն, կաշեգործություն, գործվածքների արտադրություն, գորգագործություն, ասեղնագործություն), ոչ միայն չի դադարում բնականոն զարգացումը, այլև քննարկու ժամանակահատվածում հասնում է բարձրագույն աստիճանի թե՛ բուն Հայաստանում, թե՛ նրա սահմաններից դուրս:

2. XIV – XVII դդ. նյութական մշակույթն իբրև առանձին ուսումնասիրության առարկա, արդիական դարձավ միայն վերջին ժամանակներս, երբ սկսեցին պեղել այդ շրջանի հուշարձաններն ոչ թե իբրև բազմաշերտ հուշարձանի մշակութային վերին շերտ, այլ որպես առանձին հնագիտական միավոր, թեև ուշմիջնադարյան գտածո-հավաքածուները հրապարակում հայտնվել էին շատ ավելի վաղ:

3. Խեցեգործական արտադրանքը կարևոր տեղ է զբաղեցնում նյութական մշակույթի ընդհանուր համալիրում: Այն հնագիտական պեղումների շնորհիվ հայտնաբերված գտածոներում ամենազանգվածայինն է. թեև բեկորային վիճակում, հնարավորություն է ընձեռում հետևելու արտադրության այդ տեսակի զարգացման բոլոր փուլերին:

Ուսումնասիրելով ՀՀ ողջ տարածքով (նաև Անիի) սփռված մոտ երեք տասնյակ ուշմիջնադարյան հուշարձաններում հայտնաբերված խեցեղեն հավաքածուները, կարող ենք որոշ չափով ամբողջացնել խեցեգործության ընդհանուր մակարդակը՝ քննարկու ժամանակաշրջանում առանձնացնելով երեք փուլ՝

- XIII դարի վերջին քառորդ – XIV դարի կեսերը խեցեգործական արտադրության որոշ տեսակներ իներցիայով շարունակում են նախորդ դարաշրջանի ավանդույթները՝ աստիճանաբար ներմուծելով և տեխնիկական ու տեխնոլոգիական նոր հնարներ ու միջոցներ: Երևույթը բնորոշ է նյութական մշակույթի մյուս ոլորտներին ևս (ճարտարապետություն, խաչքարային արվեստ, մանրանկարչություն, մետաղագործություն և այլն):
- XV – XVI դդ. նկատվում է խեցեղենի անկման վատթարագույն շրջանը:

XVII դ. սկսում է ընդհատված ավանդույթների վերականգնում, աստիճանական վերելք (հատկապես ճարտարապետության մեջ և դրանով պայմանավորված խեցեղենի արտադրություն):

4. Խեցեղենի համակողմանի ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս քննվող ժամանակաշրջանում առանձնացնել տարբեր տարածաշրջան-

նադարյան Հայաստանի բնակչության առօրյա կենցաղի, հասարակական-տնտեսական կյանքի որոշ կողմեր:

Գործածության կերպով անջնարակ խեցեղենը բաժանվում է տնտեսական-կենցաղային և շինարարական մեծ խմբերի՝ իրենց ստորաբաժանումներով, որոնցում ընդգրկված տեսականիներում առանձնանում են անզարդ և զարդարուն օրինակները:

Տնտեսական-կենցաղային խեցեղենը բաժանվում է 3 ենթախմբի:

I - մեծ և փոքր չափերի անոթներ, որոնք նախատեսված են չոր և հեղուկ մթերքի պահպանման և տեղափոխման համար: Դրանք գործառնական լայն նշանակության տարատեսակ կարասներ, ծափեր, ամֆորաներ, միջին և խոշոր չափերի սափորատիպ անոթներն են: Չոր և հեղուկ մթերքի տեղում պահպանման համար նախատեսված կարասներն ունեն հաստ պատեր, բերանի լայն բացվածք, սրացող հատակ, բավական ծանր են և խոշորաչափ: Հանդիպում են և ավելի նրբիրան, լավ թրծված օրինակներ, որոնք տեղադրվել են մառաններում կամ ամբարներում: XIII-XIV դդ. սկսած կարասները, թեև ձևաբանական հորինվածքում էական փոփոխություններ չեն կրում, սակայն ավելի զանգվածեղ են դառնում հատկապես շուրթերի պսակները՝ հարդարված վերադիր մատնեքազարդ, ալիքազարդ կամ ատամնազարդ գոտիներով: XIV- XV դդ. շարունակում են գործածվել սեղանի սպասք հանդիսացող կարմրափայլ դրոշմազարդ կարասները, որոնք պահպանելով հիմնական ձևն ու հարդարման արտահայտչամիջոցները, XIV դ. որոշակի փոփոխություն են կրում և գեղարվեստական արժեքով զիջում նախորդ դարաշրջանում տարածված օրինակներին:

Տնտեսական-կենցաղային խեցեղենի II ենթախմբում ներկայացված են խոհանոցային առօրյա սպասքը, խոհանոցային արտադրական ամանեղենը և սեղանի սպասքը:

Խոհանոցային սպասքը բաժանվում է.

<u>Կճուճներ</u>: Հնագիտական պեղումներով հայտնաբերված գտածոների թվում մեծաքանակ են՝ պատրաստված թե՛ դուրգի վրա, թե՛ ձեռածեփ: Կճուճներն, ըստ գործածության, բաժանվում են՝ 1-կերակուր պատրաստելու, 2- չոր կամ հեղուկ մթերք պահելու, 3- սեղանի սպասք՝ յուրաքանչյուր խմբում տարբերակվելով նաև ըստ ձևաբանական հորինվածքի, որն առավելապես դրսևորվում է առանձին մանրամասներում՝ կանթեր, նստուկներ, շուրթեր:

<u>Խփեր</u>: Կարասների, կճուճների, ինչպես նաև թոնիրների լրացուցիչ տարրերից են, սկավառակաձև՝ թեք կտրված կամ ուղիղ եզրերով: Կճուճների խփերի տրամագծերը տատանվում են 10-40սմ: Հանդիպում են՝ 1- եզրերն ուղիղ կամ դեպի վեր ծալած հարթ սկավառակի տեսքով, 2- շրջանաձև, մի փոքր բարձրացրած եզրերով, կենտրոնում կոնաձև հատվածով, որոնք կրում էին բարձր կոնաձև կամ գլանաձև բռնակներ՝ ձևաբանական տարբեր լուծումներով:

<u>Կոնքեր</u>: Լայնաբերան տարողունակ անոթներ են՝ ներքուստ և արտաքուստ անգոբապատ, ներքուստ լավ հղկած կամ փայլեցրած: Հանդիպում են խորը և սաղր կոնքեր՝ իրենց տարբերակումներով:

Ջրամաններ: Առանձնանում են խոշոր ու միջին չափերի կժեր, սափորներ, փարչեր՝ պատրաստված դուրգի վրա, հիմնականում մանրահատիկ կավից, պատած կաթնագույն կավե թույլ շփոթով՝ լուծելով ֆունկցիոնալ և գեղագիտական խնդիրներ: Ջրամանները ժամանակի ընթացքում ձևաբանական հորինվածքում էական փոփոխություններ չեն կրել՝ ի հայտ բերելով միայն մանրամասների և հարդարատարրերի նոր լուծումներ: Կրկնում են XII-XIII դդ. տարածված գնդաձև, գլանաձև, երկարաձգված մարմնով կժերի ու սափորների հորինվածքները՝ լրացված վերնամասերի կերտվածքի տարատեսակ լուծումներով:

Խոհանոցային-արտադրական անոթները հիմնականում նախատեսված են կաթնամթերքի մշակման համար: Այս խումբը բաղկացած է խոնցիներից, կաթնամաններից, քամիչներից, սաջ-տապակներից:

Մեղանի սպասքը պեղումներով հայտնաբերված գտածոների թվում ամենաստվար խումբն է: Բաղկացած է տարբեր չափերի ու ձևերի խորը և ծանծաղ թասերից, քրեղաններից, գավաթ-թասերից, պնակներից, մատուցարաններից, աղաթասերից:

Տնտեսական-կենցաղային խեցեղենի III ենթախմբում ընդգրկված են լուսավորության միջոցները: *Ճրագներն* առօրյա կենցաղում ամենագործածական առարկաներն են, որոնց մեջ հանդիպում են ինչպես ձեռածեփ պարզունակ օրինակներ, այնպես էլ բարձրորակ կավից պատրաստված նրբակերտ նմուշներ: Հայաստանում հայտնի են ճրագների բազմաթիվ տեսակներ. թասանման, նավակաձև, թեյնիկանման, տերևաձև: Հանդիպում են և միջնորմային պատով զույգ և բազմաչք, ինչպես նաև բազմաֆունկցիոնալ ճրագներ:

Խումբ II - Կենցաղային նշանակության այլ իրեր:

Ծխամորճեր -պատրաստված են մանրահատիկ, առանց հավելումների բարձրորակ կարմիր, սպիտակ, մոխրագույն կավատեսակներից: Կիրառել են ծխամորճերի հարդարման 3 եղանակ՝ փորագիր, դրոշմազարդ և զարդարուն կաղապարանախշ: Երբեմն հարդարման մի քանի եղանակ հանդես են եկել համատեղ: Ծխամորճերի ծխափողերի վրա երբեմն հանդիպում են վարպետի կամ արհեստանոցի հայատառ կամ արաբատառ արձանագրությամբ կնքադրոշմներ:

կենցաղային արտադրական և արհեստագործական գործիքներ (կաղապար, եռոտանի, ծեծիչ, ծանրոց-կախիկ և այլն): Մեր տրամադրության տակ եղած նյութերում արտադրական իրերը հազվագյուտ են, առավելապես ներկայացված են ջուլհակության մեջ կիրառվող կավե ծանրոց-կախիկներով, որոնք կենտրոնում միջանցիկ անցքով կլոր սկավառակներ են:

Խումբ III – Շինարարական խեցեղեն

Փողրակներ - Միջնադարյան Հայաստանում բավականին զարգացած էր ջրամատակարարման և ջրահեռացման համակարգը, հատկապես խոշոր քաղաքներում, գյուղաքաղաքներում, ամրոցներում և պալատական համալիրներում: Ջրատար ցանցը կազմվում էր կավե փողրակներից, որոնք հաջորդաբար ագուցվում էին իրար, ապա ամրացվում կրաշաղախով: Փողրակները տարբեր

առանձնանում են երկու խումբ: Առաջինը շարունակում է նախորդ շրջանում տարածված սպիտակ ետնախորքի վրա միագույն նկարազարդման տարբերակը՝ անգույն ջնարակով: Զարդամոտիվներից գերակշռում են անոթի մակերեսին անկանոն տեղաբաշխված լայն տերևները, ծաղկազարդերը: Երկրորդ խմբի տեսականին երբեմն անվանում են *,,թեմուրյան"* կամ *,,սպիտակ և կապույտ"* խեցեղեն: Այն չինական նույնատիպ ճենապակու նմանողությամբ արված հախճապակի է, որն առանձնանում է թեթևակի թափանցիկություն ունեցող հիմքով, պատած անգույն թափանցիկ ջնարակով: Նկարազարդմանը բնորոշ են կենդանակերպ պատկերները, հեռավորարևելյան բուսական տեսարանները:

Ջնարակած խեցեղենը XVI-XVII դդ.: XVI-XVII դդ. խեցեղենի գեղարվեստական հարդարումն ընթանում էր երեք հիմնական ուղղություններով՝

ա. կոբալտով նկարազարդում սպիտակ ետնախորքի վրա, որը XV դարում տարածված խեցեղենի շարունակությունն էր:

բ. վերջնարակային նկարազարդում (արծնապակիով կամ շողյունով), որ տարածված էր XII-XIV դդ. Արևելքի բոլոր երկրներում: Շողյունով նկարազարդումը XV դարում ասպարեզից դուրս գալով, XVI դարում կրկին վերածնվում է: Վերջնարակային նկարազարդումը լայնորեն կիրառվել է թուրքական խեցեգործական կենտրոններում (Իզնիկ, Քյոթահիա): Դրանց բնորոշ է կաթնագույն ետնախորքի վրա սև գծաքաշ ուրվագծով ամփոփված բուսական հարուստ զարդամոտիվներով նկարազարդումը: Քյոթահիայից ներմուծած XVI-XVII դդ. հախճապակե ըմպանակներ հայտնաբերվել են Լոռե բերդաքաղաքի պեղումներով:

գ. չինական Մին դինաստիայի (1368-1644) ժամանակի խեցեղենի նմանակում: Վերջինս տարածված էր ոչ միայն Արևելքի երկրներում, այլև բավականին հարգի էր և Արևմուտքում: Զարդապատկերմանը բնորոշ էին ինչպես հանգիստ բնապատկերային տեսարանները, այնպես էլ նվազագույնի հասցրած նկարազարդումը:

XVI-XVII դդ. չինական նմանակումներով հախճապակու օրինակներ հայտնի են Էջմիածնի Ղազարաշեն վեհարանի 2010 թ. պեղումներից:

Ջնարակած խեցեղենի քննությունը հնարավորություն է ընձեռում հստակեցնելու ժամանակագրական սանդղակը՝ առանձնացնելով XIV-XVII դդ. ջնարակած խեցեղենի զարգացման ընդհանուր բնույթի, հարդարման սկզբունքների, գունապնակի փոփոխության 3 փուլ՝ XIII-XIV դդ., XIV դ. վ.-XV դ. և XVI – XVII դդ.: Միաժամանակ ջնարակած խեցեղենի ուսումնասիրությունը հնարավոր է դարձնում առանձնացնել տեղական և ներմուծված օրինակները՝ մատնանշելով արհեստագործական կենտրոնները և ներմուծման ուղիները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. XIV – XVII դդ. մոնղոլական, մոնղոլա-թուրքմենական (թեմուրյան), թուրքմենական (կարա-կոյունլու, ակ-կոյունլու), ապա և թուրքական ու իրանա-

գույնով, իսկ ջնարակապատներն ունեն մուգ մանուշակագույն երանգ: Անոթի հարդարանքի կարևոր տարրերից են ջնարակի թանձր շերտից ստեղծված վերադիր, բավական ռելիեֆային մանուշակագույն շուշանաձաղիկները՝ ագուցված անոթի անջնարակ ժապավեններին: Նման տեխնիկա հայտնի չէ ոչ միայն Հայաստանում, այլև իրանական ու միջինասիական խեցեգործական խոշոր կենտրոններում:

XIII-XIV դդ. հախճապակին: Հախճապակե հիմքով գտածոների մեջ առանձնանում են անոթները, հախճասալերն ու պերճանքի առարկաները: Հախճապակե անոթների գյուտերը թեև մեծաքանակ չեն, սակայն առանձնանում են ինչպես տեղական, այնպես էլ մերձավորարևելյան, իրանական ծագման օրինակները: Համեմատաբար մեծաքանակ են շքաղյուսների գյուտերը, որոնք հայտնի են Անիից, Գառնիից, Տիկնունիից, Եղվարդից, Կիրանց վանքից, Թեղենյաց վանքից, Էջմիածնից, Հայկաձորի միջնադարյան բնակավայրից: Հախճասալերի մեջ ևս առանձնանում են տեղական և ներմուծված օրինակները: Պերճանքի առարկաները պատրաստվում էին տեղական փիրուզագույն հախճապակուց հիմնականում տարբեր չափերի ու ձևերի ուլունքներ: Գտնվել են տարբեր երանգների աչքի ուլունքներ, որոնց մոգական նշանակություն վերագրելով, մարդիկ կրել են իրենց վրա:

XIII-XIV դդ. սելադոն և ճենապակի: Բացի իրանական ու միջինասիական խեցեգործական կենտրոններից ներմուծված օրինակներից և դրանց ազդեցությամբ ստեղծված տեղական ընդօրինակություններից, Անիի, Գառնիի, Լոռե բերդաքաղաքի, Եղեգիսի, Ոստինքի, Փարպիի պեղումներով հայտնի են ներմուծված չինական սելադոններ:

XIII դ. կես-XIV դարի սկզբին թռիչքային շրջան էր խեցեգործության բնագավառում, քանզի այդ փուլում ավարտվում էր ջնարակած խեցեղենի զարգացման որոշակի մի շրջան, երբ վերջնականապես ձևավորվեցին ջնարակի հիմնական տեսակները, դրանց մշակման տեխնիկական հնարներն ու զարդապատկերման սկզբունքները:

XIV-XV դդ. շարունակում են միաժամանակ կիրարկվել ջնարակի տարբեր բաղադրատեսակները՝ կապարային, ալկալիական և կապարա-ալկալիական:

Ջնարակած խեցեղենը XV դարում: XV դարը, շարունակելով նախորդ շրջանում արմատացած ավանդույթները, նշանավորվում է որպես տեխնոլոգիական նորությունների մի նոր փուլ՝ սահմանելով խեցեգործական արվեստի զարգացման սանդղակի վերին աստիճանը: Այդ շրջանում ավարտվում է նոր հարդարատարրերի, տեխնիկական միջոցների, ձևավորման կերպի ու ոճի ներմուծումը՝ հիմք դառնալով հետագա դարերի խեցեգործական արվեստի զարգացմանը:

XIV դ. վերջին-XV դարի սկզբին ձևավորվում և զանգվածային են դառնում *կաթնագույն ետնախորքի վրա կոբալտով նկարազարդ խեցանոթները,* որոնց մեջ

չափերի էին՝ լայն ու նեղ եզրերով: Ջրահեռացման հետաքրքիր համակարգ է բացվել 2012 թ. Քոբայրում, որը գործածվել է բնականից հորդահոս ջրեր ունեցող Քոբայրի վանքի տարածքում ջրի կուտակումներից խուսափելու համար: Կավե փողրակները ծառայում էին նաև իբրև օդամուղ՝ թոնիրների, հնոց-վառարանների պարագայում:

Ճարտարապետական հարդարանքի տարրեր-աղյուսե թրծած սալիկներ, տանիքի ծածկեր: Վաղ միջնադարում շինարվեստում լայն գործածություն ունեցող XI դ. վերջերից կղմինդրների ընդհատված արտադրությունը ուշ միջնադարում մասամբ վերականգնվում է (հատկապես Արցախում և Սյունիքում), որը, սակայն, լայն տարածում չի գտնում: XV դ. կղմինդրի օգտագործման մասին արձանագրում է թուրք ուղևոր Է. Չելեբին Երևանի բերդի կառուցման առիթով: Ուշ շրջանի կղմինդրի գյուտեր հայտնի են և Թեղենյաց վանքից:

Հայտնաբերված գտածոներում ճարտարապետական հարդարանքի ուշագրավ մանրամասն է Թեղենյաց վանքի պեղումներից հայտնի լուսամուտի բացվածքը շրջանցող կավակերտ պարակալը, որը շինության արտաքին հարդարանքի գեղարվեստական արտահայտչամիջոցների շարքում հատուկ տեղ է գրավում:

Ճարտարապետական հարդարանքի հետաքրքիր մանրամասն է 2013թ. Թեղուտից պատահականորեն գտնված քառակուսի սալը, որի հարթ մակերեսը հարդարված է կորացած օձագլուխ եզրերով վերադիր խաչապատկեր-սվաստիկայով: Այն կիրառվել է պատերի շարվածքում, իբրև չար աչքից պահպանակ:

Անջնարակ խեցեղենի հավաքածուներում զանգվածային են անզարդ բեկորները, սակայն քիչ չեն նաև հարդարված օրինակները: Միջնադարյան խեցեղենի հարդարանքում տարածված էին հարդարման հետևյալ եղանակները՝ անգոբապատում, կարմրաներկում, փայլեցում, նկարազարդում, փորագրում, մակերեսի ռելիեֆային մշակում՝ ներճկումների միջոցով, դրոշմում, դրվագազարդում կաղապարով, վերադիր զարդերի ագուցում:

Անջնարակ՝ անզարդ և զարդարուն խեցեղենն, ընդհանուր առմամբ, նախորդ ժամանակաշրջանի ժառանգական շարունակությունն է, թեև որակապես և հարդարատարրերի բազմազանությամբ զիջում է վերջինիս: Այն հիմնականում տեղական արտադրանք է: Գտածո հավաքածուներում ներմուծած օրինակներ չեն հանդիպում:

ԳԼՈՒԽ IV: ՋՆԱՐԱԿԱԾ ԽԵՑԵՂԵՆ

Միջնադարյան Հայաստանի խեցեգործության առաջատար ճյուղը ջնարակած խեցեղենի արտադրությունն է, որը պատմական տարբեր ժամանակաշրջաններում կրել է նշանակալից փոփոխություններ: Քաղաքային մշակույթի զարգացման և հասարակության աճող պահանջմունքներին համապատասխան ջնարակած խեցեղենն աստիճանաբար անհատական պատվերից դառնում է զանգվածային արտադրություն, որը պայմանավորված էր տեխնոլոգիական

առաջընթացով ու քաղաքներում արտադրողական ուժերի կենտրոնացմամբ: Ջնարակած խեցեղենի դերը կարևորվում է միջնադարյան Հայաստանի պատմության, նյութական մշակույթի, ինչպես նաև հասարակական-տնտեսական, առևտրա-դրամական հարաբերությունների ուսումնասիրման գործում:

Ջնարակած խեցեղենի արտադրությունն իր գոյության ողջ ընթացքում համընդհանուր էր Արևելքի բոլոր երկրներում: Արհեստագործական նորամուծություններն ու նրանց զարգացման փուլային հաջորդականությունը պարտադիր էին բոլոր խեցեգործական կենտրոնների համար, որտեղ ջնարակած խեցեղենի զարգացման տարբեր փուլերում տեղի ունեցող փոփոխությունները գրեթե միաժամանակ էին ի հայտ գալիս:

Միջնադարյան ջնարակած խեցեղենի արտադրությունը Հայաստանում սկսվում է IX դ. կեսերից, որը կոչված էր բավարարելու բարձրաշխարհիկ հասարակության պահանջները: XII-XIII դդ. խեցեգործական արհեստի տեխնոլոգիական առաջընթացի և տեխնիկական նոր լուծումների շնորհիվ նկատվում է ջնարակած խեցեղենի ձևերի և հարդարատարրերի որոշակի միօրինականացում, որը հանգեցնում է զանգվածային արտադրության՝ բավարարելու արդեն լայն շուկայի պահանջարկը: Հետևելով Արևելքի երկրների խեցեգործական կենտրոնների ավանդույթներին Հայաստանի միջնադարյան հուշարձաններից հայտնաբերվում են ինչպես այդ կենտրոններից ներմուծած օրինակներ (իրանական ,,մինաի'' և շողյուն հախճապակի, չինական սելադոն ու ճենապակի և այլն), այնպես էլ տեղական խեցեգործական կենտրոններում ստեղծվում են դրանց ընդօրինակությունները և նոր տեսակներ, ինչպես օրինակ՝ կոբալտային ետնախորքի վրա արված ոսկեգույն վերջնարակային նկարազարդմամբ խեցեղենը, վերադիր զարդերով ու դիմակներով հախճապակին:

XIII դարից ջնարակած խեցեղենի արտադրության ոլորտում (կենցաղային խեցեղենում և ճարտարապետական հարդարվեստում) լայնորեն կիրառում են ալկալիական ջնարակը, որը թեև հալվում էր ավելի բարձր ջերմաստիճանում, սակայն, ի տարբերություն կապարայինի, ավելի էժան էր և ձևավորում էր ողորկ մակերես՝ ի հայտ բերելով խեցեղենի հարդարման նոր հնարներ: Նոր ալկալիական ջնարակով պատած ենթաջնարակային նկարազարդմամբ խեցեղենին զուգահեռ շարունակվում է նոր տարրերով հագեցած ավանդական խեցեղենի արտադրությունը: Սկսվում է զարդաձևերի երկրաչափականացում, փորագիր զարդատարրերի նոր ու պարզ հորինվածքների մշակում: Փոփոխություն է կատարվում նաև գունային ներկապնակում:

XIII-XIV դդ. խեցեգործության մեջ նկատվում է երկու ուղղությունների համակցում՝ ա. նախորդ ժամանակաշրջանի ավանդույթների շարունակականություն, բ. նախորդ ժամանակաշրջանի ձեռքբերումների հիման վրա ջնարակած խեցեղենի որակական մեկ այլ տեսակի զարգացում, որն արդեն էապես տարբերվում էր նախորդից և աստիճանաբար գերիշխող դառնում խեցեգործության մեջ:

Ջնարակած խեցեղենը XIII – XIV դդ.

ԽՈՒՄԲ I: ***Կապարային միագույն և բազմագույն ջնարակով պատած խեցեղեն:*** Հետազոտվող խեցեղենը նախորդ շրջանի համանման խեցեղենի անմիջական շարունակությունն է, սակայն որոշակի փոփոխություններով: Կապարային միագույն ջնարակով պատած խեցեղեն հայտնաբերվում է XIII-XIV դդ. թվագրվող միջնադարյան գրեթե բոլոր հուշարձաններում:

Կապարային խիտ միագույն ջնարակով և տեխնիկական տարբեր միջոցներով հարդարված անոթները (փորագիր, սեղմում, անգոբի հեռացում, անգոբով նկարազարդում) շարունակում են գործածվել մինչև XIV դ. կեսերը, սակայն նման խեցեղենի պատրաստման տեխնոլոգիան հետադիմել էր: Աստիճանաբար կապարային ջնարակով պատած խեցեղենը տեղը զիջում է ալկալիական ջնարակով պատած միագույն ու բազմագույն նկարազարդումով խեցեղենին:

ԽՈՒՄԲ II: ***Ալկալիական միագույն և բազմագույն ջնարակներով պատած խեցեղեն,*** որը ստորաբաժանվում է.

- միագույն թափանցիկ ջնարակով պատած խեցեղեն,
- միագույն ջնարակով պատած փորագրազարդ խեցեղեն,
- բազմագույն ջնարակով պատած փորագրազարդ խեցեղեն,
- ենթաջնարակային բազմագույն նկարազարդմամբ, փորագրազարդ խեցեղեն,
- գունավոր ջնարակով պատած, ենթաջնարակային միագույն նկարազարդմամբ խեցեղեն, որում ըստ ջնարակի գույնի տարբերակվում են.

ա. փիրուզագույն ետնախորքի վրա սևով նկարազարդ,

բ. երկնագույն ետնախորքի վրա սևով նկարազարդ,

գ. դեղին ետնախորքի վրա սևով նկարազարդ,

դ. սպիտակ ետնախորքի վրա սևով նկարազարդ:

ե. կաթնագույն կամ բաց երկնագույն ետնախորքի վրա ձիթապտղի գույնով նկարազարդ:

զ. կաթնագույն ետնախորքի վրա թանձր շագանակա-մանուշակագույնով նկարազարդ:

- անգույն և գունավոր ալկալիական ջնարակով պատած, ենթաջնարակային բազմագույն նկարազարդմամբ խեցեղեն՝ իր տարբերակումներով.

ա. երկնագույն ետնախորքի վրա բազմագույն նկարազարդ,

բ. դեղին ետնախորքի վրա բազմագույն նկարազարդ,

գ. կաթնագույն ետնախորքի վրա բազմագույն նկարազարդ:

ԽՈՒՄԲ III: ***Ջնարակած վերադիր զարդերով խեցեղեն:*** Սա մի տարատեսակ է, որի եզակի գտածոն Նորավանքի պեղումներից է: Անոթն ունեցել է ուղղահայաց հարդարման համակարգ՝ ձևավորված լայն շերտագծերի շարքով, որոնք մեկընդմեջ ջնարակապատվել են և անջատվել ավելի մուգ, գրեթե սև բաժանարար գծով: Ժապավենները, որոնք զուրկ են ջնարակից, ներկված են թանաքա-